



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

Լ Ո Ւ Ր Ե Ր Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ց

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է.— Մտեղանում Սովետական Մոցիալիտական Ռեսպուբլիկաների Միության ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցանանքների հայկական տարածվարը վերականգնվում է և ընդարձակվում Կարճ ժամանակից այն կրացվի նոր ցուցադրումով և կարացուրի ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ընդգրկումների նորագույն նվաճումները:

Նախկին երկուսի փոխարեն այստեղ կա ինը սրահ՝ 1600 քառակուսի մետր մակերեսով: Երկու գլխավոր ցուցասրահներն արացուցիչում են վերջին երեք տարում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները արդյունաբերության, արտնագործի, գիտության, արվեստի, առողջապահության և ժողովրդական կրթության բնագավառներում: Նորակառույց սրահներից մեկը կղբազեցնեն մեր գյուղատնտեսության վերելքը պատկերող արտպնասաները:

Տաղավարի վերակառուցման նախագծի հեղինակն է ճարտարագետ պրոֆ. Ս. Մաֆարյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԵՐՔԻ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ.— Հայ գիտնականների արնաշան աշխատանքների շնորհիվ վերջին տարիներս Հայաստանում հայտնաբերվել են տասնյակ տեսակի զանազան օգտակար հանածոների՝ պղնձի, մոլիբդենի, երկաթի, կապարի, ծծմբաթաթի, բրոմի և այլ գույնավոր ու հազվագյուտ մետաղների հանքավայրեր, ինչպես նաև աղ և լողմազան հրաշալի շինանյութեր: Այժմ Հայաստանի երկրաբանների առջև դրված է պատասխանատու և պատվավոր խնդիր՝ լիովին բացել ռեսպուբլիկայի ընդերքի հարստությունները:

Ավելի քան 140 երկրաբանական արշավախմբեր այս տարի ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում օգտակար հանածոներ են որոնում: Այժմ հաջողությամբ հետախուզվում են Գափանի և Շամլուղի հանքավայրերի թևերը, որտեղ հայտնաբերված արդյունաբերական նոր հանքազանգվածները պարունակում են պղնձի զգալի պաշարներ:

Արագ թափով առաջ է տարվում և մոտ ժամանակներս կավարտվի Հրազդանի երկաթահանքի հետախուզությունը, կկառուցվի հանքանյութի հարստացման ֆաբրիկա:

Զգալիորեն ընդլայնվում են ներգնաձորի շրջանի բազմամետաղների հանքավայրերի սահմանները:

Զոտի ոսկեհանքերի հայտնաբերումից հետո երկրաբանները մի շարք ոսկեհանքեր են գտել ռեսպուբլիկայի հարավային և հարավ-արևմտյան շրջաններում, որտեղ այժմ նախնական հետախուզական աշխատանքներ են կատարվում:

Մեծ հեռանկարներ ունեն Իջևանի շրջանի Սարիգյուղի վերջերս հայտնաբերված բնատնիսային կավահանքերը, որոնց հումքը իր որակով Սովետական Միությունում լավագույնն է և կարող է բազա լինել երկրի հարավային և արևմտյան տնտեսական շրջաններին, բնատնիսային արժեքավոր փուշի և հորատման կամ մատակարարելու համար: Իջևանում նախատեսվում է կառուցել կավի ակտիվացման գործարան:

Ձանազան շինանյութերի տասնյակ նոր հանքավայրեր հայտնաբերել և այժմ ուսումնասիրում են երկրաբանական արշավախմբերը: Դրանք են սուֆը, բազալտը, բեմզան, հրաբխախարամը, շինարարական ավազը և այլն: Մեծ ուշադրության է արժանի Այրուժի գիպսի նորահայտ հանքավայրը, որը գրավում է 20—30 քառակուսի կիլոմետր տարածություն: Հանքերում գիպսի պարունակությունը հասնում է մինչև 80 տոկոսի:

Անխոնջ աշխատանք են կատարում նաև հիդրոերկրաբանները, որոնք ստորերկրյա ջրերը ծառայեցնում են ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության կարիքներին:

Երկրաբանները հետախուզական մեծ աշխատանքներ կծավալեն պղնձի և այլ սև ու գունավոր մետաղների հետազոտելու ավելի ինտենսիվ որոնման, ինչպես նաև ռեսպուբլիկայի առանձին շրջանների նավթազառնակության պրոբլեմի ուսումնասիրության ասպարեզում: Առավել լայն աշխատանքներ կկատարվեն նաև Հայաստանի մետաղահանքերում, հազվագյուտ և ցրված տարրեր գտնելու համար:

ԳԻՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆՈՒԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ.— Վերջերս ներանում լույս տեսավ Վախտանգ Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» բովանդակալից գիրքը: Դա արժեքավոր գիտական մի

ուսումնասիրություն է Հայաստանի կենդանիների մասին, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Բոլոր նրանք, որոնք սիրում են հայրենի բնությունը, նրա կենդանական աշխարհը, հափշտակությունը կենթերցեն այս աշխատությունը: Բայց շնորհակալություն զգացումով կհավանեմ գիրքը նաև նրանք, որոնք առաջին անգամ են այսքան մոտիկից ծանոթանում մեր կենդանական աշխարհին: Հեղինակի զվարթ պատմելու ձևը, նյութի հստակ շարադրանքը, դրական մեղքերումները ապահովում են նրան մի աննախընթաց հաջողություն այս թեմայով ստեղծված աշխատությունների մեջ:

ԵՐԿԱՐՈՐՅԱ ԴՊՐՈՑԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Մեկ տարի առաջ ստեղծված № 1 երկարօրյա դպրոցն իր տեսակի մեջ միակն է Երևանում:

Դպրոցի նպատակն է ընդգրկել աշխատող ծնողների երեխաների, դասերից հետո զբաղվել նրանց ուսման հարցերով: Երեխաները դպրոց գալով վաղ առավոտյան և տուն վերադառնալով երեկոյան, կտրվում են փողոցից, զբաղվում արտադասարանական աշխատանքով և զգալի առաջադիմության հասնում ուսման և գիտությունների մեջ:

Մրազովի է մոտ ապագային ավելացնել թիվը երկարօրյա դպրոցների:

ՏԵՐԻԿՅՈՒ ՄՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ.— Վերջերս Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանում բացվել էր ցուցահանդես՝ նվիրված անգլիական նշանավոր գրող Վիլյամ Տերիկյի ծննդյան 150-ամյակին:

Ցուցահանդեսի նյութերը հնարավորություն են ընձեռում ծանոթանալու անվանի գրողի կյանքին և գրական գործունեությանը:

Ցուցահանդեսում և ստեղծագործություններում կայանում էր գրողի երկերի անգլերեն, ռուսերեն, հայերեն հրատարակությունների օրինակները: Ուշագրավ են նաև մի շարք մենագրություններ Տերիկյի կյանքի և նրա ռուս գրականության հետ ունեցած կապի մասին:

ԳՐԻԳՈՐ ԶՈՂՐԱՊԻ ՄՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Հայֆիլհարմոնիայի ամառային դահլիճում վերջերս նշվեց հայ նշանավոր նովելիստ Գրիգոր Զոհրապի ծննդյան 100-ամյակը: Հանդիսության ներկա էին գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, մայրաքաղաքի գրասեր հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Բնմի խորքում, թարմ ծաղիկների ու կանաչի մեջ, ականավոր գրողի մեծագիր գիմանկարն է:

Գրիգոր Զոհրապի գրական ժառանգության մասին հայ գրող Նաիրի Զարյանն ասում է. «Զոհրապը մեկն է հայկական ռեալիզմի հիմնադիրներից և ամենամեծ ռեալիստը արևմտահայ գրականության մեջ: Տաղանդավոր իրավաբան, փայլուն հոստոթ, մեծահամբավ հասարակական գործիչ, թուրքական մեջլիսի եռընտիր պատգամավոր Զոհրապի հզոր տաղանդը իր ամենաշքեղ մարմնացումը գտավ գրականության մեջ: Զոհրապի հոգևոր ժառանգությունը և նրա հանճարը մնացին ժողովրդին: Զոհրապի հրաշագեղ նովելներով կարող է պարծենալ այնևս մի կուլտուրական ազգա»:

Զոհրապի մասին այնուհետև ելույթներ ունեցան բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հյուսյանը, գրողներ Ս. Տարոնցին, Ս. Ալաշաշյանը, Ս. Կուրտիկյանը, Վ. Դավթյանը:

Հանդիսության վերջում տեղի ունեցավ ձոխ համերգ:

ՎԱՐՊԵՏԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ.— Երևանի Պլեխանովի փողոցի վրա կառուցված տանը մեծատաղանդ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը ապրել է իր կյանքի վերջին երկու տասնամյակները: Այստեղ են ստեղծվել Իսահակյանի բազմաթիվ երկերը:

Հայաստանի կառավարության որոշումով, Ավետիք Իսահակյանի վերահիշյալ բնակարանը վերածվել է նրա անվան տուն-թանգարանի:

Երկարակյանի այս շենքը ունի հինգ սենյակներ: Եռուտով ներարանը, աշխատասենյակը, գրադարանը, ձաշասենյակ-ընդունարանը կտանան այն տեսքը, ինչպես եղել են Վարպետի կենդանության ժամանակ:

Աշխատասենյակում են Իսահակյանի անկողինը, ձեռնափայտերը, գրասեղանն ու թանաքասաքրը, հագուստները, կոշիկները, ակնոցները, հարյուրավոր լուսանկարներ, հուշանվերներ և այլ իրեր: Խնամքով պահվում է տեսակերձ այգին, որտեղ իր ձեռքով խլճադրեցիներ է սնկել վարպետը:

Իսահակյանը թողել է գրական մեծ ժառանգություն: Թանգարանում են նրա ստեղծագործությունների բազմալեզու հրատարակությունների օրինակները:

Ուշագրավ է մինչև այժմ էլ ձեռագիր վիճակում գտնվող «Ուստա Կարո» վեպի ստեղծման պատմությունը:

Ավարտված բայց ձեռագիր վիճակում է գտնվում նաև «Մասա Մանուկ և Դև Սուլթանը» գուսանական ոճով գրված դրուցադրությունը, որը նվիրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարին: «Պահպանվել են «Ճոթ օր ապատում, յոթ օր անապատում», «Ղազարոս», «Հալիական Ֆուսուս» և տասնյակ անավարտ այլ գործերի ձեռագրեր, պատառիկներ, գրական մտահղացումների համառոտագրություններ:

Իսահակյանը սիրել է գրի առնել իր խոհերը, մշտքերն ու դիտողությունները: Դրանք գրված են նրա գրքերի լուսանցքներում, ծոցատետրերում և առանձին թերթերի վրա: Ահա դրանցից մի երկուսը, որ նա գրել է մահվանից քիչ առաջ. «Բաժանված վիշտը կես վիշտ է, բաժանված ուրախությունը՝ կրկնակի ուրախություն», «Մինչև լոթնաստուն տարեկանը տարին թո կյանքից է գնում, լոթնաստունից հետո գու մահից ես պղկում թո կյանքը»:

Առանձին պատառիկների վրա պահվել են հայ արվեստի ու գրականության կարևորագույն գործիչների մասին Վարպետի բազմաթիվ մտքերը:

Անմահ Կոմիտաս վարդապետի մասին գրվել է «Մթանշնչի են նրա մեղեդիները, վերին աստիճանի հուզական, հարուստ լիրիզմ է նրա մեղեդին, կախարհիչ: Հայ գեղջուկը և Կոմիտասը նույն ստեղծագործական դոմեններն են: Գեղջուկը տեր է անսպառ հարբատության, դարերով բյուրեղացած այս հարուստ գանձը Կոմիտասը հասցնում է գեղարվեստական կուլտուրությանը»:

Հարուստ է նաև Իսահակյանի նամակներին: Հայկական մշակույթի պատմության առանձին հարցերի լուսաբանման համար այն առատ նյութ կտա ուսումնասիրողներին:

Իսահակյանի անձնական դրագրանում կա հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ շեղումներով շուրջ 6000 հատոր գիրք: Դրանցից մի քանի հարյուրի վրա կան Վարպետին ուղղված ընծայական մակագրություններ:

Այս բոլոր նյութերը ուսումնասիրվում, կարգի բերվում են ցուցադրելու համար: Երևում է բազմաձև դար այցելուների առջև թանգարանը կրացի իր գուները:

ԴԻՐԱՍԱՆ ԶՈՎԷԱՆՆԵՍ ԱՐԵՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 25-ԱՄՅԱԿԸ.— Վերջերս Երևանում նշվեց անվանի դերասան Զովհաննես Արեյանի մահվան 25-ամյակը: Զովհաննես Արեյանը փոքր տարիքից նվիրվել է հայ թատրոնի բեմին և եղել է, Աղամյանից հետո, ամենասիրված դերասանը հայ բեմում: Արեյանը 1925 թվականին արտասահմանից վերադառնալով, հալատարմությամբ և մեծ նվիրումով ծառայել է հայ թատրոնին, մինչև իր մահը: Նրա մեջ Հայրենիքի սերը շատ խորն է եղել: Նրա բեմական արվեստը, իր կյանքի վերջին շրջանում, փայլել է իր ամբողջ գեղեցկությամբ: Այդ մասին ինքն ասում է. «Եթե ես մինչև հիմա երկաթե շվիաներով էի կապված թատրոնին, այսօրվանից ոսկե շվիաներով կկապվեմ նրան»:

ԿՈՆՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԴԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ.— Մի քանի ամիս է Հայաստանում հյուրընկալվում էր հայտնի գրող Կոստան Զարյանը: Վերջերս Արվեստի աշխատողների տանը Կ. Զարյանը հանդես եկավ Վեհապետ դա Վինչին և Հայաստանը՝ նյութի շուրջը հետաքրքիր դասախոսությամբ:

Քննելով Վերածննդի խոշոր ներկայացուցիչ, հանձարեղ նկարիչ, գիտնական և նկարիչ Լեոնարդո դա Վինչիի «Ատլանտյան մասյան»-ը, Զարյանը փաստական հարուստ տվյալների հիման վրա նշեց, որ 1482 թվականին մեծ արվեստագետը եղել է Մերձավոր Արևելքում (Կիպրոս, Կիլիկիա, Հայաստան), ուսումնասիրել է տեղական կենցաղը, սովորությունները, հետաքրքրվել է հայկական ճարտարապետությամբ, կատարել է շափագրություններ և իր հետ Իտալիա տարել գծագրերը:

Դասախոսությունից հետո մտքերի փոխանակության մասնակցեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Կարինյանը և արվեստի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Մ. Մազմանյանը և ուրիշներ:

ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՏՐՈՆԻ 40-ԱՄՅԱԿԸ.— Այս տարի լրանում է Սուն-

դուկյանի անվան սիտական սկզբնական թատրոնի 40-ամյակը:

Թատրոնի տաղանդավոր կուկտիվը ձևնամուխ է եղել հանդես գալու հորեյանական նոր խաղացանկով:

Քառասնամյակի առթիվ թատրոնը ներկայացնելու է Գ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, որի դրամատիկական կոմպոզիցիան կատարել է ժողովրդական արտիստ Գ. Զանիբեկյանը: Պիեսը բեմադրելու է նույնինքն կոմպոզիցիայի հեղինակը: Գլխավոր դերերը ստանձնել են՝ Վարդան Մամիկոնյան՝ Գ. Մալյան և Գ. Հարությունյան, Վասակ Սյունեցի՝ Գ. Զանիբեկյան և Գ. Հակոբյան, բեմադրության մեջ զբաղված է թատրոնի ստեղծագործական ողջ կուկտիվը:

40 տարի առաջ թատրոնի առաջին թատերաշրջանը բացվեց Գ. Սունդուկյանի «Պիես» պիեսով: Իր 40-ամյակին թատրոնը որոշել է բեմ հանել դարձյալ նույն պիեսը նոր բեմադրությամբ:

Հորեյանական թատերաշրջանում թատրոնը որոշել է նաև բեմադրել Կոռնելյի «Սիլ» ռեգեդությունը:

Այս թատերաշրջանում լուրջ ուշադրություն է դարձվելու նաև սովետահայ դրամատուրգների ստեղծագործություններին:

Իրենց լավագույն բեմադրություններով, որոնք մշտնելու են թատրոնի հորեյանական խաղացանկի մեջ, սունդուկյանցիները հանդես են գալու նաև տարբեր բաղադրանքներով:

Թատրոնի ամբողջ ստեղծագործական կուկտիվը լցված է հորեյանական թատերաշրջանը նոր, բարձրարվեստ ստեղծագործություններով նշանավորելու ցանկությամբ:

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԵՐԳՉՈՒՆԻ ԵԱՔԵ ԵԱՀՐԱԶՅԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Սեպտեմբերի 3-ին, Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, կույթ ունեցավ ամերիկահայ սիրված երգչուհի Շարե Շարազյանը:

Շնորհալի երգչուհու տարիների երազները՝ լինել Հայաստանում և երգել իր հարազատների համար, իրականացել էին Համերգասրահը լնփ-լեցուն էր և երաժշտասեր հասարակությունը ծափահարում էր հեռավոր ամերիկացի երգչուհու հանդեպ: Երգչուհու արվեստագետ զավակներից մեկին՝ Շարեն համարձակ էր երգում, որովհետև իր Մայրենի հողի վրա էր կանգնել և իր սիրտը թրթռում էր իր ժողովրդի և Հայրենիքի սիրով և կարոտով: Երգչուհու երգացանկում էին Պերգոլինիի, Բրամսի, Սկարլատի, Պուլինիի, Գերշվինի, Բեռնըստայնի, Լյովսկի և հայ երգահանների՝ հանձարեղ Կոմիտաս վարդապետի, Ալան Զովհաննեսի, Վարդան Մարգարյանի, Սրվանձտյանի, Կոտոյանի և Գրուկյանյանի երգերը:

